Հարցեր ՀՀ կառավարությանն ու վարչապետին

Ժառանգություն խմբակցությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 80-րդ և Ազգային Ժողովի կանոնակարգի Հայաստանի Հանրապետության օրենքի 105.1-րդ հոդվածներով, այսօր ՀՀ Վարչապետին ու Կառավարությանն է ուղարկել հարցապնդում 1988թ. երկրաշարժի աղետի գոտում ՀՀ Կառավարության բնակարանաշինության ծրագրի և Գլենդել Հիլզ ՓԲԸ-ի կողմից դրա իրականացման վերաբերյալ...

Հարցապնդման ներածական մասում Ժառանգությունը մասնավորապես նշում է. Ժառանգություն կուսակցությունը եւ համանուն խորհրդարանական խմբակցությունը մտահոգված են 1988 թվականի դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժից անօթեւան մնացած եւ մինչ օրս տնակներում բնակվող (միայն Գյումրիում ավելի քան 4100) ընտանիքների ճակատագրերով: Խնդրի կապակցությամբ աղաղակող փաստեր էր ներկայացրել Գյումրիի ժուռնալիստների Ասպարեզ ակումբը իր Դեկտեմբերի 7-ը ծաղկեպսակներ դնելու օր լինելուց առաջ վերտառության կոչում (04.12.2009թ.): Ժառանգություն խմբակցությունն իր 07.12.2009թ. հայտարարությամբ մտահոգություն հայտնեց աղետի գոտում, մասնավորապես՝ Գյումրիում, Սպիտակում, Շիրակի եւ Լոռու մարզերի 35 գյուղական համայնքներում Գլենդել Հիլզ ՓԲԸ-ի կողմից պետական ծրագրերով իրականացվող բնակարանաշինության 2009 թվականի անբավարար ընթացքի, բնակարանաշինության ու բնակարանների բաշխման գործընթացում չարաշահումների եւ անընդունելի արդյունքների, պատկան մարմինների անգործության վերաբերյալ: Գլենդել Հիլզ ՓԲԸ-ի տվյալներով այս աշխատանքների համար պետությունից եւ Գյումրի համայնքից ստացվել են միջոցներ ու պայմաններ՝ մինչեւ 2009 թվականի տարեվերջ 1320 նոր բնակարաններ շահագործելու համար: Ակնհայտ է՝ աղետի գոտու վերականգնման 2009 թվականի ծրագրի թերակատարման, ձախողման ու տապալման փաստը, ինչպես նաեւ՝ առկա բնակարանաշինության կասկածելի որակը: Նկարագրվածի կապակցությամբ Ժառանգությունն իր հարցապնդման մեջ շարադրել է հետեւյալ հարցադրումները.

1. Որքա՞ն բնակարաններ են հանձնվել շահագործման 2009 թվականի դեկտեմբերի 31-ի եւ այս պահի դրությամբ:
2. Որքա՞ն բյուջետային միջոցներ են տրամադրվել Գլենդել Հիլզ ՓԲԸ-ին վերոհիշյալ պետական ծրագրերի շրջանակներում 2009 թվականի դեկտեմբերի 31-ի եւ այս պահի դրությամբ:
3. Վերոհիշյալ պետական ծրագրերի շրջանակներում որքա՞ն է տրամադրվել արտաքին վարկային միջոցներից Գլենդել Հիլզ ՓԲԸ-ին 2009 թվականի դեկտեմբերի 31-ի եւ այս պահի դրությամբ:
4. Արդյո՞ք Կառավարությունը որոշում է կայացրել եւ ստեղծել (կազմել) հանձնաժողով բոլոր շահագրգիռ կողմերի (կառավարության լիազոր մարմին, քաղաքական կուսակցություններ, ԶԼՄ-ներ, հասարակական կազմակերպություններ եւ այլն) մասնակցությամբ՝ նմանօրինակ կարեւոր եւ լայնածավալ ծրագրերի իրականացման վերահսկողության ու գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով:
5. Արդյո՞ք Գլենդել Հիլզ ՓԲԸ-ն Կառավարությանը կամ լիազոր մարմնին ներկայացրել է 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատանքների կատարողական եւ ֆինանսական հաշվետվությունները: Եթե այդպիսիք առկա են,

ապա խնդրում ենք տրամադրել կրկնօրինակները կամ պատճենները:
6. Ինչո՞վ է պայմանավորված 2009 թվականի շինարարական ծավալներն ավարտելուց երկու ամիս առաջ Գլենդել Հիլզ ՓԲԸ-ի եւ Հայաստանի Հանրապետության Կառավարության <<համատեղ>> որոշումը (ըստ 04.11.2009թ. Գլենդել Հիլզե ՓԲԸ-ի կողմից տարածած հայտարարության), առ այն, որ բնակարանաշինության այս տարվա (2009թ.) ծրագրերում ընդգրկվեն նաեւ երեք սենյականոց բնակարանների կառուցումը: Արդյո՞ք Կառավարությունը ուսումնասիրել է աղետի գոտում 1, 2, 3 եւ 4 սենյականոց բնակարանների պահանջարկը, եւ ինչու՞ ի սկզբանե այն հաշվի չի առնվել՝ բնակարանաշինության ծրագրերը կազմելիս:
7. Մինչեւ օրս ինչպիսի՞ եւ ի՞նչ ծավալով խախտումներ ու թերացումներ են արձանագրվել սույն ծրագրի շրջանակներում: Ովքե՞ր են ենթարկվել պատասխանատվության թերացումների համար:
8. Որքա՞ն բնակարաններ շահագործման կհանձվեն 2010 թվականի գարնանը (ըստ ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանի\' ապրիլին):
Ազգային Ժողովի կանոնակարգե Հայաստանի Հանրապետության օրենքի 105.1-րդ հոդվածի 3-րդ եւ 8-րդ մասերի համաձայն\' հարցապնդումը ստանալուց հետո 20 օրվա ընթացքում Կառավարությունը պետք է գրավոր պատասխան ուղարկի Ժառանգությանը, որից հետո ԱԺ նիստում կհնչեցվեն հարցապնդումն ու Կառավարության պատասխանը: Օրենքի համաձայն՝ հարցապնդումն ու դրա պատասխանը հրապարակվելու են նաեւ ,Հայաստանի Հանրապետությունե օրաթերթում:
www.haynews.am